Անվտանգություն. հետպատերազմյան Արցախում կյանքի վերակազմակերպման թիվ մեկ առաջնահերթությունը

Համառոտագիր

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

Հետպատերազմյան խնդիրների շարքի մասին ցանկացած քննարկում այս կամ այն կերպ սկսվում է անվտանգության հարցից: Տեղահանվածների վերադարձի կազմակերպումից մինչև բնականոն կյանքի վերականգնում շղթայի բոլոր խնդիրները սկսվում են հենց անվտանգության հարցից, ընդ որում, անվտանգություն՝ լայն իմաստով. ճանապարհներից մինչև բնակավայրերի անվտանգություն, սննդի և ջրի ապահովություն, ոստիկանության գործունեություն և այլն:

Անվտանգության նոր պարադիգմի հրատապությունը

Ակնհայտ է, որ անվտանգության առումով այսօր ունենք շատ լուրջ խնդիրներ, իսկ անորոշությունը շատ մեծ է: Պարզ չէ այլևս, թե որն է Արցախի անվտանգության պարադիգմը: Եթե նայենք պատմական տեսանկյունից, ժամանակին ԽՍՀՄ անվտանգությունն էր, որն աշխատում էր և բացառում պատերազմները: Հետո ունեցանք «Կոլցո» օպերացիան, որից հետո դարձանք մեր գլխի տերը, և Արցախի պատերազմն սկսվեց: Անվտանգության վերջին պարադիգման այն էր, որ Հայաստանն Արցախի անվտանգության երաշխավորն է: Այստեղ էլ կտրվեց թելն ու առաջ եկավ այսօրվա անորոշությունը:

Միայն մի օրինակ կարելի է բերել. եռակողմ հայտարարությունը ստորագրելուց անմիջապես հետո, երբ Արցախի մեր հայրենակիցները համատարած անորոշության մեջ էին, գյուղապետերից մեկը ֆեյսբուքում գրառում արեց. «Ժողովուրդ, պատրա՞ստ եք Ռուսաստանի մարզ դառնալ», և մեծաթիվ մարդիկ դրական արձագանքեցին: Բացատրությունն էլի անվտանգության դաշտում է: Մարդիկ այսօր ամենաշատն անվտանգության կարիք ունեն և ցանկանում են հասկանալ, թե որն է չկրակելու երաշխիքը: Եվ եթե նման երաշխիք այս պահին տալիս է Ռուսաստանը, թեկուզ ընդամենը առաջին դեմքերի բանավոր խոսքի ձևով, ապա դա հույս է առաջացնում մարդկանց մոտ շփման գծի երկու կողմում էլ: Սակայն անհրաժեշտ է հասկանալ, որ նման երաշխիքները երկար չեն կարող աշխատել, քանի որ անհնար է ամբողջովին բավարարել երկու կողմերի շահերն էլ: Անվտանգության պարադիգմը պետք է ելնի հետևյալ դրույթներից.

1. Ադրբեջանում վերջին 20-30 տարիները պատմական ռեվիզիոնիզմ է իրականացվել տարբեր թեզերով, օրինակ՝ «հայերն այստեղ երբեք չեն ապրել» և այլն: Հակահայ քարոզչությունն այստեղ շատ ուժեղ է եղել, ինչի հետևանքները փոխելը դժվար կամ անհնար է լինելու:
2. Մյուս ռիսկը Թուրքիայի միջամտությունն է: Թուրքիայի արտաքին քաղաքականության ոլորտում անորոշությունները մեծաթիվ են. այսօրվա Թուրքիան բոլորովին այլ վարքագիծ է դրսևորում, քան առաջ էր: Այս պատերազմից հետո, թերևս, իրավիճակն էլ ավելի կփոխվի. ակնհայտորեն ավելանալու է Թուրքիայի ազդեցությունն Ադրբեջանում:
3. Իլհամ Ալիևն արդեն սկսել է խոսել այն մասին, որ Ղարաբաղի կոնֆլիկտ չկա, Ղարաբաղը մեր հողն է, սա մեր եկեղեցին է և այլն: Ինչ-որ պահից սկսած՝ Ադրբեջանում հասկանալու են, որ իրականությունն այդքան էլ այդպես չէ, և կարող են հետևել որոշակի գործողություններ:
4. Մենք պետք է կարողանանք հասնել Ղարաբաղին այնպիսի կարգավիճակի ամրագրմանը, որը կապահովի անվտանգության երաշխիքներ: Խոսքը անվտանգություն երաշխավորող կարգավիճակի մասին է: Իսկ անվտանգությունն երաշխավորելու և ապահովելու համար հրատապ քայլեր են անհրաժեշտ իրականացնել՝ տեղանահվածների վերադարձ և/կամ վերաբնակեցում, բանակցությունների շարունակում, նոր և առավել դետալացված լուծումների փնտրտուք և ամրագրում: Անվտանգության նոր պարադիգմը պետք է օր առաջ հստականա: Նախկինում մեզ էինք համարում մեր անվտանգության երաշխավորը: Հիմա այս մոտեցումը չի աշխատում: Իհարկե, չի բացառվում, որ որոշակի ժամանակ հետո այն կարող է կրկին աշխատել, սակայն այս պահին դրա հնարավորությունը չի երևում:

Երևան 0001
Սայաթ Նովա 19
Հեռ.՝ +374 10 582638
Ֆաքս՝ +374 10 527082

mail@ichd.org
www.ichd.org

Անվտանգությունը՝ հողի վրա, առօրյայում

«Գորիս-Ստեփանակերտ ճանապարհի վրա ադրբեջանցիները քարերով խփել են հայկական մեքենաներին», «վազանցի համար սպառնացել են հայ վարորդներին», «Ճուշիից դիպուկահարը կրակել է Ստեփանակերտի շներին», «Ստեփանակերտի սուպերմարկետներում խաղաղապահների ուղեկցությամբ ադրբեջանցիներ են առևտուր անում». այսօրինակ լուրերը լայնորեն շրջանառվում են արցախում գտնվողների և դեռևս Հայաստանում մնացած արցախցիների շրջանում: Շատ հաճախ նման տեղեկությունները Արցախ հասնում են հենց Հայաստանում գտնվող արցախցիներից:

Լուրերը անընդհատ ավելանում են, բայց դրանք ո՛չ պաշտոնապես հերքվում են, ո՛չ էլ հաստատվում և չեն հանգում տեսանելի այնպիսի հետևանքների, որպեսզի մարդիկ սկսեն հավատալ, որ իրավիճակը տեր ունի: Արցախցիները պնդում են, թե խաղաղապահներն արագ ու պրոֆեսիոնալ են գործում, երբ որևէ խնդրով հասնում են իրենց, ինչը, սակայն, հնարավոր չէ պնդել արցախյան գերատեսչությունների մասին: Սրա արդյունքում անորոշությունները ոչ միայն չեն քչանում, այլ ավելանում են, ավելանում է անհանգստությունը ապագայի հանդեպ: Նման պայմաններում տեղահանվածների վերադարձից մինչև բնականոն կյանքի կազմակերպում շղթան շատ դանդաղ հնարավոր կլինի գործարկել, շատ դժվար կլինի մարդկանց դրդել ուղղորդված քայլերի: Հստակ ուղերձների, ապագայի տեսլականի, արագ ու պրոֆեսիոնալ աշխատանքի ժամանակն է, որը դեռ պարզ չէ, երբ կսկսի իրականանալ:

Համառոտագիրը մշակվել է 2020թ. դեկտեմբերի 7-ին կայացած՝ «Կյանքի և կենսագործունեության անվտանգությունը սահմանամերձ համայնքներում» խորագրով առանց հողումների իրավունքի առցանց քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա: Կլոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ:

Համառոտագրում արտահայտված են ՄՀՄԿ-ի կարծիքները, որոնք պարտադիր չէ, որ համընկնեն ՄՀԿ-ի Զարգացման ծրագրի տեսակետներին: